զգործն, և պահանջեն զհամար գումարացն առեալ 'ի Յունաց. և ապա երթալ 'ի տեղի աքսորանաց և նորոգել զամբոցս յընչից իւրոց, և այս եւս 'ի միջնորդելոյ ոմանց, ապա թէ ոչ՝ գլխապարտ էր նա։ Ի բանից աստի կրկնապատկեցան երկիւղ Քաղաքապետին. զի ինքն շրջեալ էր զմիտս նորին 'ի կողմն Յունաց։ Եւ մինչ դանդաղէր Դատաւորն ելանել 'ի քաղաքէն, հասին անդ երկու սուրհանդակք եւս, եւ հանդերձակիր Արքայի (Ջուխատար) և ընդ նոսա միաբան Սարգիսն, բերեալ գիրս առ Նուրի էֆէնտի և առ Պատրիարքն եւ հրամանաւ Արքայի կարգեցաւ Դատաւոր Երուսաղէմի 'ի տեղի աքսորելոյն նախկին Քարտուղար դատարանի Մուսայ էֆէնտի։

Այրս այս էր 'ի քաղաքէն Երուսաղէմի եւ Դպրապետ դատարանի (1806), և գժտեալ ընդ Միւֆթի քաղաքին տարագրեցաւ 'ի Կոստանդինուպոլիս իբր ամս 10, և եմուտ անդ յայլ և այլ պաշտօնս, մինչեւ լինիլ Քարտուղար բանակի, և լեալ սիրելի յաչս Տիւրքի Զատէ մեծի Դենպետին, ակն ունէր խնամով նորին լինիլ Դատաւոր Երուսաղէմի. 'ի մեռանիլ հակառակորդին իւրոյ, առաւել եւս ջան ետ յայն։ Սա յառաջագոյն բարեկամ էր Հայոց, այլ վասն խռովութեան իրիք թշնամացեալ ընդ նոսա բաղում վնասուք՝ յարեցաւ 'ի Յոյնս, եւ եղեւ առիթ նորոգելոյ զհին հրովարտակս նոցա հակառակ Հայոց։ Եւ ապա ետ առնուլ նոցա զհրովարտակն ՌՅԼԶ–ՌԸ թուականաւ, որով Յոյնք մերժել փութային իսպառ զՀայս յԵրուսաղէմէ։ Եւ յետ անցանելոյ ժամանակաց (1813) Սուլթան Մահմուտ խնդրեաց 'ի Դենպետէն տալ բերել յԵրուսաղէմէ զՇէյխ Ապու Սէօյիւտն, ժառանգել զօրհնութիւն նորա, և նա առաքեաց զայս Մուսայ, բերել զնա անտի. բայց 'ի մեկնիլ նորա 'ի մայրաքաղաքէն՝ Յոյնք ծանրագին ընծայիւք և տրօք որսացին զնա 'ի կողմն իւրեանց, որպէս գրէ ականատես Դիոնէսիոս վարդապետ։ Եւ հասեալ նորա յԵրուսաղէմ զնաց 'ի տաճարն Ս. Յարութեան, ուր 'ի նկատի էառ զչինուածսն. տեղիքն Յունաց փառաւոր, եւ Հայոցն խաթարեալ։ Եւ Թէոդորոս Պատրիարք պատուեալ զնա ընծայիւք հրաւիրեաց դալ 'ի վանս, և նորա եկեալ հաշտեցաւ ընդ նմա. Պատրիարքն աղաչէր զնա